ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԻ ԴԵՐԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ 1918 Թ.

Առաջին աշխարհամարտի ընթացքում Պաղեստինյան ռազմաճակատի խոշորագույն եւ վճռորոշ ճակատամարտը հայտնի է Մեգիդոյի (Արմագեդոնի) ճակատամարտ անունով: Այն տեղի է ունեցել 1918 թ. սեպտեմբերի 19-25-ը, որի արդյունքում այնտեղ տեղակայված թուրքական երեք բանակները գլխովին ոչնչացվեցին: Դա, ի վերջո, հանգեցրեց Օսմանյան կայսրության անձնատվությանը:

Վերոնշյալ ռազմագործողությանը մասնակցություն է ունեցել նաեւ հայ զինվորականությունը: Բրիտանաֆրանսիական զորախմբի կազմում գործում էր Կիպրոսում հայ կամավորներից կազմավորված Հայկական (Արեւելյան) լեգեոնը, որն աչքի ընկավ Ռաֆաթ-Արարայի տեղամասում: Թուրքական բանակի կապիտան, Դարդանելի ճակատամարտում հերոսացած Սարգիս Թորոսյանը եւս թուրքերի ջախջախման գործում որոշակի դեր է ունեցել:

Հետաքրքիր է նշել, որ հայ պատմագիտությունը շրջանառության մեջ է դրել Արարայի ճակատամարտ անվանումը՝ Մեգիդոյի փոխարեն, քանի որ Հայկական լեգեոնը կանգնած էր Արարայի բարձունքների մոտ: Իրականում 100 կմ ձգվող ռազմաճակատի մոտ 5,3 կմ երկարությամբ տարածքում՝ Զավիյա բնակավայրից մինչեւ Ռաֆաթ-Արարայի բարձունքները, կանգնած էր ֆրանսիական զորախումբը, որի կազմում էին Հայկական լեգեոնի երկու գումարտակները: Ինչպես կտեսնենք, իրականում հայկական զորամասը գրոհեց Ռաֆաթի բարձունքների վրա՝ Արարայի հարեւանությամբ: Սակայն Ս. Պարթեւյանն իր «Արարա» հուշագրքույկով շրջանառության մեջ դրեց Արարայի ճակատամարտ հասկացությունը, որը մտավ հայ պատմագրության մեջ[1]: Տ. Պոյաճյանն իր հուշագրության մեջ առաջին անգամ փաստագրական նյու-

[1] Տես **Ս. Պարթեւեան**, Արարա: Հայկական լեգեոնը, Իզմիր, 1919:

թի հիման վրա ցույց է տվել, որ հայկական զորախումբը կռվել է ոչ թե Արարայում, այլ դրա հարեւանությամբ՝ Ռաֆաթում, իսկ Արարայում բրիտանական 10-րդ դիվիզիայի հնդկական զորամասերն էին[2]:

Քանի որ Պաղեստինյան ռազմաճակատի գործողությունները եւ Հայկական լեգեոնի պատմությունը հայ պատմագիտության կողմից գիտական լուրջ ուսումնասիրության չի ենթարկվել, դա պատճառ է դարձել, որ այդ իրադարձություններից մեկ դար անց հայ իրականության մեջ դեռեւս Մեգիդոյի ճակատամարտը եւ դրանում Հայկական լեգեոնի իրական դերը չի լուսաբանվել: Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ Պաղեստինի թուրքական բանակի ջախջախման գործում հայերի ներդրումը:

Դեռեւս 1916 թ. վերջից Կիպրոսում Ֆրանսիայի կողմից կազմավորվել էր Հայկական լեգեոնը, որի երկու գումարտակները 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղափոխվել էին Եգիպտոս, իսկ ամռանը՝ Պորտ Սայիդ-Քանթարա-Ռամլե-Լյուդ գծով Պաղեստինյան ռազմաճակատ: Օգոստոսի 30-ին լեգեոնը ճամբար էր խփել ռազմաճակատի առաջավոր գծից մոտ 7 կմ հեռավորության վրա[3]: Հաջորդ օրը Ա. գումարտակը տեղափոխվել էր առաջին գիծ[4], սեպտեմբերի 15-ին Բ. գումարտակը եւս գիշերով երեքժամյա անցումով տեղափոխվել էր առաջին գիծ: Ա. գումարտակը, որը երկու շաբաթ առաջավոր գծում էր, տեղափոխվեց երկրորդ գիծ[5]:

Այս շրջանում Պաղեստինյան ռազմաճակատի բրիտանա-ֆրանսիական եւ թուրք-գերմանական բանակների շփման գիծն անցնում էր Երուսաղեմ ու Նաբլուս քաղաքների միջեւ ընկած շրջանով եւ ձգվում էր Հորդանան գետից մինչեւ Միջերկրական ծով: Դեռեւս 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին բրիտանական զորքերը երկու անգամ փորձել էին ճեղքել հակառակորդի պաշտպանությունը, բայց անհաջողություն էին կրել: Դրանից հետո կողմերի միջեւ հարաբերական անդորր էր հաստատվել, եւ նրանք զբաղվել էին ուժերը վերադասավորելով:

Թուրքերը հույս ունեին, որ կարող են հետ մղել հակառակորդին՝ կառչելով Սամարիայի լեռնային, բնականից անառիկ դիրքերին, որոնք

---

[2] Տես **Տ. Պոյաճեան**, Հայկական լէգէոնը: Պատմական Յուշագրութիւն, Ուօթրթաուն, 1965, էջ 142:

[3] Տես **Ռ. Գասպարյան**, Հայկական լեգեոնը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», 1996, թ. 1, էջ 8:

[4] Տես «Ատանայի Հայոց պատմութիւն», խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս, 1970, էջ 426:

[5] Տես «Արարա», Նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին, 1923, Պոսթոն, էջ 8:

ամրացվել էին գերմանական մասնագետների կողմից: Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը պաշտպանական այդ հզոր գծի հետ մեծ հույսեր էր կապում եւ այն անվանում էր «երկրորդ Դարդանել»[6]: Նա հույս ուներ, որ այդտեղ եւս կկարողանան կասեցնել հակառակորդի մեծաթիվ ուժերը, ինչպես Դարդանելի օպերացիայի ժամանակ:

Եգիպտական ռազմարշավային զորքերի գլխավոր հրամանատար, բրիտանական գեներալ Էդմունդ Ալենբին որոշել էր թշնամուն վճռական հարված հասցնել սեպտեմբերին: Տեղանքը հիմնականում լեռնային էր, եւ հակառակորդի դիրքերը գրավելը մեծ դժվարությունների ու զոհերի հետ էր կապված: Սակայն նույնիսկ հաջողության դեպքում թշնամին նահանջից հետո կարող էր զբաղեցնել նոր պաշտպանական գիծ: Ալենբին որոշել էր այնպիսի հարված հասցնել, որով ամբողջությամբ կջախջախեր թշնամուն եւ թույլ չէր տա պաշտպանության նոր գիծ ստեղծել: Վճռական հարձակման հաջողությունը հիմնականում կախված էր թշնամու համար հարվածի ուղղության անսպասելիությունից, հանկարծակիությունից եւ ուժգնությունից:

Պաղեստինում գերմանաթուրքական զորքերի գլխավոր հրամանատար, գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսը գլխավոր հարձակումը սպասում էր ռազմաճակատի արեւելքից՝ Ամմանի ուղղությամբ, քանի որ նախկինում հենց այս թեւից էին բրիտանական ուժերը հուժկու գրոհներ կազմակերպել: Սակայն այս անգամ Ալենբին որոշել էր հարվածն ուղղել արեւմտյան հատվածից: Նա որոշել էր Միջերկրականի առափնյա շրջանով՝ Սարոնի դաշտով, հեծելազորի սրընթաց գրոհով ճեղքել հակառակորդի պաշտպանական գիծը, դուրս գալ թշնամու թիկունք եւ գրավել Հայֆան ու Նաբլուսը, որով կկտրվեր Պաղեստինի թուրքական ուժերի նահանջի ճանապարհը: Իսկ Ամմանից Դամասկոս երկաթուղային ճանապարհով թուրքերի նահանջի ուղին փակելու էր Մեքքայի շերիֆ Հուսեյինի որդի Էմիր Ֆեյսալի արաբական բանակը: Փաստորեն, Ալենբին որոշել էր թուրքական պաղեստինյան բանակը վերցնել շրջապատման մեջ եւ ամբողջությամբ ոչնչացնել, որի արդյունքում հակառակորդը այլեւս որեւէ լուրջ դիմադրություն չէր կարողանա ցույց տալ դեպի Լիբանան ու Սիրիա շարժվող բրիտանա-ֆրանսիական բանակին:

Պաղեստինյան ռազմաճակատում սեպտեմբերյան խոշոր հաղթանակի գործում անուրանալի դեր ունեցավ այն հանգամանքը, որ բրիտանական հրամանատարությունը կարողացավ գաղտնի պահել հար-

[6] Տես «Կամաւորը» (Արարայի յաղթանակի 10-րդ տարեդարձի առթիւ), Գահիրէ, 1928, էջ 34:

վածի գլխավոր ուղղությունը եւ զորքերի բոլոր տեղաշարժերը: Եգիպտական ռազմարշավային կորպուսում լոնդոնյան լրատվամիջոցների պաշտոնական թղթակից Վիլյամ Մեսին խոստովանում է, որ զորքերի քողարկումը այնքան լավ էր կազմակերպվել, եւ հրամանատարությունը այնքան գաղտնի էր հարձակողական պլանները մշակել, որ ինքը, գրեթե մշտապես գտնվելով գլխավոր շտաբում եւ բազմիցս այցելելով տարբեր զորամասեր, միայն հարձակումից մեկ օր առաջ էր տեղեկացել զորքերի տեղաշարժի եւ վճռական հարձակման մասին, այն էլ՝ հրամանատարությունից[7]:

Է. Ալենբիին հաջողվեց զորքերի տեղաշարժերն աննկատ իրականացնել եւ հարձակման հիմնական ուղղությունը գաղտնի պահել թշնամուց: Սեպտեմբերի 18-ին՝ հարձակումից մեկ օր առաջ, գերմանական ինքնաթիռը հետախուզական թռիչք էր իրականացրել հակառակորդի դիրքերի վրայով, սակայն օդաչուն որեւէ տեղաշարժ եւ զորքերի նոր կենտրոնացում չէր կարողացել հայտնաբերել: Միայն ֆրանսիական զորախմբի կազմում նկատել էր Հայկական լեգեոնի համալրումը, որը համարել էր իտալական զորամաս[8]:

Մեգիդոյի ճակատամարտի նախօրյակին Պաղեստինյան ռազմաճակատի գիծը Միջերկրականի ափից ձգվում էր մինչեւ Մեռյալ ծով՝ մոտ 95 կմ: Տարբեր աղբյուրների համադրմամբ հստակեցրել ենք ռազմաճակատի գծում բրիտանական եւ թուրքական զորքերի, ինչպես նաեւ հայկական զորամասի տեղաբաշխումը, նրանց առջեւ դրված խնդիրները[9]: Բացի Միջերկրական ծովին հարող նեղ հատվածից՝ Սարոնի դաշտից, որը Բիր Զեյթ բնակավայրից ձգվում էր մինչեւ Ռոշ-Հաային, մնացած տարածքները լեռնային կտրատված տեղանք էին, որտեղ թուրք-գերմանական ուժերը հաջողությամբ կարող էին կասեցնել հակառակորդին: Եգիպտական ռազմարշավային զորքերը կազմված էին երեք՝ Անապատային հեծյալ (հրամ.՝ ավստրալիացի գեներալ-լեյտենանտ Հենրի Շովել), 21-րդ (հրամ.՝ գեներալ-լեյտենանտ Էդուարդ Բուլֆին) եւ 20-րդ (հրամ.՝ գեներալ-լեյտենանտ Ֆիլիպ Չեթվուդ) կորպուսներից եւ գեներալ Է. Չայթորսի զորախմբից:

Գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսի ղեկավարած թուրքական «Յըլդըրըմ» (կայծակ) զորամիավորումը կազմված էր 4-րդ (հրամ.՝ Մերսինլի Մեհմեդ Ֆեմալ փաշա), 7-րդ (հրամ.՝ Մուստաֆա Քեմալ փա-

[7] Տես **W. Massey**, Allenby's final triumph, London, 1920, էջ 96:
[8] Տես **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 146:
[9] Տես անդ, էջ 144-145: **W. Massey**, նշվ. աշխ., էջ 111-112, 126-129, 147:

շա), 8-րդ (հրամ.՝ Իսմայիլ Ֆեւաղ Զորանլի փաշա) բանակներից: 8-րդ բանակի կազմի մեջ էր գերմանական Ասիա կորպուսը (հրամ.՝ Գուստավ ֆոն Օպեն), որը աչքի էր ընկնում բարձր մարտունակությամբ[10]:

Բրիտանական 21-րդ կորպուսի 54-րդ դիվիզիայի կազմում էր Պաղեստինի եւ Սիրիայի ֆրանսիական զորախումբը (հրամ.՝ գնդապետ Ֆիլիպ դը Պիեպապ), որը զբաղեցրել էր Զավիայից մինչեւ Ռաֆաթ-Արարայի բարձունքները՝ 5.3 կմ լայնությամբ լեռնային տարածքը: Այն կազմված էր Արեւելյան լեգեոնի հայկական 1-ին եւ 2-րդ գումարտակներից, սիրիացիների մի վաշտից, Ալժիրյան հրացանակիրների 1-ին գնդի 7-րդ եւ 2-րդ գնդի 9-րդ գումարտակներից, հեծյալ էսկադրոնից:

Անապատային հեծյալ կորպուսը կանգնած էր 21-րդ կորպուսի թիկունքում: Վերջինիս խնդիրն էր ջախջախել թշնամու աջ թեւը եւ հասնել Դեյր Շարաֆ-Սամարիա-Թուլկարմ գծին: Հետեւազորի ուժերով հակառակորդի պաշտպանությունը ճեղքելուց հետո Անապատային հեծյալ կորպուսը պետք է ձախից շրջանցեր 21-րդ կորպուսը եւ սրընթաց գրոհեր Աֆուլայի եւ Բեյսանի վրա՝ կտրելով հակառակորդի երկաթուղային ուղին եւ փակելով նրա նահանջի ճանապարհը: 20-րդ կորպուսը պետք է գրոհեր Ռաֆաթից-Բեյթ Լաբան գծի վրա: Արարայից Քաֆր ալ-Դիք հատվածը զբաղեցրեց 10-րդ հնդկական դիվիզիան:

Զավիայից մինչեւ Բերուքին ձգվող լեռնային հատվածում կանգնած էին թուրքական Զախակողմյան կորպուսի (հրամ.՝ Գուստավ ֆոն Օպեն) 19-րդ, 16-րդ հետեւակային, 2-րդ հեծելազորային դիվիզիաները եւ գերմանական «Ասիա» կորպուսը:

Պաղեստինյան ռազմաճակատում հակառակորդ բանակների թվաքանակի մասին պատմագիտության մեջ տարբեր թվեր են նշվել: Որոշ հեղինակներ թուրքական զորքերի թիվը ցույց են տալիս 30-50 000, իսկ բրիտանականինը՝ 70-76 000[11]: Ըստ թուրքական բանակի կապիտան Սարգիս Թորոսյանի՝ Պաղեստինյան ճակատում թուրքերն ունեին 120 000 զինվոր, բրիտանացիները՝ 150 000[12]: Վերջին թիվը, մեր կարծիքով, ավելի հավանական է, եթե հաշվի առնենք ճակատամարտի արդյուն-

[10] Տես http://web.archive.org/web/20110605134841/http://www.sacktrick.com/igu/germancolonialuniforms/hist%20ottoman.htm

[11] Տես **Շ. Թորոսյան**, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920, Երեւան, 1987, էջ 66-67: **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 114: **Е. Лудшувейт**, Турция в годы первой мировой войны 1914-1918 гг. Военно-политический очерк, Москва, 1966, էջ 282-283:

[12] Տես **Ս. Թորոսյան**, Դարդանելից մինչեւ Պաղեստին, թարգմանեց անգլերեն բնագրից Լիլիթ Թութխալյանը, Երեւան, 2012, էջ 154:

քում գերված թուրքերի թվաքանակը, ինչպես նաեւ հեղինակի իրազեկվածությունը:

1918 թ. սեպտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը սկսվեց Մեգիդոյի ճակատամարտը, որը վճռելու էր Պաղեստինյան ռազմաճակատի ճակատագիրը: Ընդհանուր հարձակման համար ընտրված էր 4.30 րոպեն, երբ լուսինը այլեւս չէր լուսավորի, եւ հնարավոր կլիներ հետեւակը մոտեցնել թշնամու դիրքերին՝ անսպասելի եւ սրընթաց գրոհի համար, որը թույլ կտար նվազեցնել զոհերի քանակը: Առաջինը պետք է գրոհեր 54-րդ դիվիզիան, որի մեջ էր նաեւ ֆրանսիական զորախումբը: Նրանք հարձակման էին գնալու 10 րոպե շուտ՝ 4.20: Նրանց դիմաց լեռնային լավ ամրացված դիրքեր էին, եւ նրանք լեռների ստորոտներից պետք է առաջինը գնային հարձակման[13]: 54-րդ դիվիզիայի խնդիրն էր շեղել թուրքերի ուշադրությունը հարձակման գլխավոր ուղղությունից:

Հարձակումից երեք ժամ առաջ՝ մեկն անց տասնհինգին, ավստրալիացի օդաչու, կապիտան Ռոս Սմիթին հաջողվեց ռմբակոծել եւ ամբողջությամբ ավերել Աֆուլայում գտնվող հեռագրական կայանը: Քաղաքի ռազմավարական կետերի վրա նետվեց 16 հատ 50 կգ-ոց ռումբ: Դրա շնորհիվ թուրքական գլխավոր շտաբի հեռագրական եւ հեռախոսային կապը ռազմաճակատի հետ կտրվեց: Նաբլուսի շտաբը եւ կապի կետերը նույնպես ռմբակոծվեցին: Արդյունքում թուրքական գլխավոր հրամանատարությունը երկու օր տեղյակ չէր, թե ինչ է կատարվում առաջին գծում[14]:

Համընդհանուր հարձակման ազդանշան հանդիսացավ հրետանային կրակը, որը հիմնականում ուղղված էր թուրքերի գլխավոր կրակակետերին: Լավ հաշվարկված հրետանային համազարկերը ոչնչացրին թշնամու հրետանու զգալի մասը, որի արդյունքում թուրքական հրետանին չկարողացավ մեծ վնասներ հասցնել հարձակվող հետեւազորին: Բրիտանական հրետանու անմիջական հարվածի տակ հայտնվեցին նաեւ թշնամու շտաբները եւ հեռախոսային կայանները[15]: Հարվածի անսպասելիությունն ու ուժգնությունը այնքան մեծ էր, որ հարձակման բոլոր ուղղություններում առաջին տասը րոպեների ընթացքում գրավվեցին հակառակորդի առաջին շարքի խրամատները[16]:

---

[13] Տես **W. Massey**, նշվ. աշխ., էջ 122:
[14] Տես **F. Cutlack**, The Australian Flying Corps in the western and eastern theatres of war 1914-1918, Sydney, 1941, էջ 152:
[15] Տես **W. Massey**, նշվ. աշխ., էջ 123:
[16] Տես անդ, էջ 125:

Հայկական լեգեոնի առաջ խնդիր էր դրված գրավել Արարայից դեպի ձախ գտնվող բավական լավ ամրացված երկու դիրքերը[17]: Ռաֆաթ-Արարան 350 մետր բարձրությամբ եւ 3 կմ ձգվող լեռ էր: Հայկական զորախումբը կանգնած էր Ռաֆաթի դիմաց, իսկ Արարայի ուղղությամբ՝ բրիտանական 10-րդ դիվիզիայի հնդկական զորամասերն էին[18]:

Հայկական լեգեոնը հանձնարարություն ստացավ գրավել Ռաֆաթի բարձունքը, որը ռազմաճակատի ամենադժվար ու գրեթե անառիկ հատվածներից էր համարվում: Մինչ այդ դաշնակիցների զորքերը երեք անգամ փորձել էին գրավել այդ դիրքերը, բայց թշնամին հետ էր շպրտել նրանց[19]: Արարայից ձախ Ռաֆաթ գյուղն էր, որի դիմաց սիրիական զորախումբը կանգնեց, իսկ այդտեղից ավելի ձախ հայկական դիրքերն էին, որոնք ձգվում էին ավելի քան երեք կիլոմետր: Դրանք երեք բլուրներ էին, որոնց վրա հակառակորդը իրար հաջորդող երեք պաշտպանական գիծ էր կառուցել: Հայկական զորախմբի 600 զինվորների դիմաց կանգնած էին 1000 թուրք եւ 600 գերմանացի զինվոր[20]:

1918 թ. սեպտեմբերի 18-ի երեկոյան լեգեոնի Բ. գումարտակը հրաման ստացավ նախապատրաստվել հաջորդ օրվա գրոհին, որը փաստորեն առաջին լուրջ մարտական մկրտությունն էր լինելու հայ կամավորների համար: Իսկ լեգեոնի Ա. գումարտակը ճակատամարտի ժամանակ պահեստային ուժերի մեջ էր մնալու[21]:

Հետաքրքիր է, որ թուրքերի վրա հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով հարձակման նախօրեին բրիտանական ինքնաթիռը թշնամու թիկունքում թռուցիկներ տարածեց, որոնց մեջ գրված էր, որ նրանց դեմ կանգնած է 60 000-ոց հայկական բանակ[22]: Փաստորեն՝ աշխարհի հզորագույն կայսրության ներկայացուցիչները թուրքերին վախեցնում էին ոչ թե իրենց բանակով, այլ՝ հայկական լինելու հանգամանքով:

Սեպտեմբերի 19-ի արշալույսին սկսվեց ընդհանուր հարձակումը: Հայկական լեգեոնը մի քանի ժամ տեւած համառ մարտերից հետո կարողացավ սվինամարտով թուրքերին դուրս շպրտել առաջապահ դիրքերից: *«Թուրքը որ անպաշտպան եւ անզէն հայերը մորթելու մէջ*

---

[17] Տես «Պատմութիւն Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան 1887-1963», խմբ.՝ Ա.Կիտուր, հ. Բ., Պէյրութ, 1963, էջ 342:
[18] Տես **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 142-143:
[19] Տես **Խ. Ամեմեան**, Հայկական լէգէոնը, «Համազգային»-ի տարեգիրք, 1953, էջ 73:
[20] Տես «Արարա», էջ 6:
[21] Տես **Գ. Լազեան**, Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 192:
[22] Տես **Մ. Թաթարեան**, Կամաւորի մը յուշերը, Անթիլիաս, 1960, էջ 15:

այնքան ճարպիկութիւն եւ քաջութիւն ցոյց տուած էր,- գրում է ճակատամարտի մասնակից Մ. Թաթարեանը,- հայ կամաւորին զէնքին դէմ ընկրկեցաւ եւ իր ամրակուռ դիրքերուն առաջին գիծը լքելով անցաւ երկրորդ դիրքերուն»[23]:

Շարունակելով հաջող հարձակումը՝ հայ զինվորները գրավեցին նաեւ պաշտպանական երկրորդ եւ երրորդ բնագծերը: Դրանով հայ մարտիկների վերահսկողության տակ հայտնվեց Ռաֆաթից արեւմուտք ընկած լեռնաշղթան, իսկ երբ թուրքերը փորձեցին հակագրոհ կազմակերպել, հայ զինվորները համառորեն պաշտպանեցին «Երեք թփուտներ» կոչվող բարձունքը[24]:

Ժամը 15-ին բրիտանական հրամանատարությունը հրահանգեց շարունակել առաջխաղացումը: Լեգեոնականները նետվեցին մարտի եւ ջախջախեցին թշնամուն[25]:

Հայ մարտիկների կողմից Ռաֆաթի բարձունքների գրավումը նպաստեց Արարայի, Մեսհայի եւ Պետիեյի դիրքերի անձնատուր լինելուն[26]:

1918 թ. սեպտեմբերի 22-ին մորն ուղարկած նամակում Հարեթ Իսկենդերյանը գրում է. *«Ամսոյս 19-ին շղթայազերծուեցաւ մեր յարձակողականը. մինչեւ հիմայ 5000-է աւելի գերի եւ 100-ի մօտ թնդանօթներ ձեռք բերուեցան: Զոհեր ունեցանք, որոնց մէջ նաեւ կային մեր ընկերներէն պաշտելի հոգիներ: Ես ոչ վէրք ունիմ, ոչ բան. ողջ առողջ եմ, թէեւ հրաշքով ազատուած: Առաջին իսկ օրը քսան մղոն յառաջխաղացում մը ունեցանք: Մեր պարտականութիւնը լիովին պիտի կատարենք, ապրը վստահ եղէք: Մեր բանակի բարոյականը հիանալի է»*[27]:

Տ. Թեքեյանը վկայում է, որ Արարայի ճակատամարտից, Պաղեստինի ու Սիրիայի բազմաթիվ տարածքների ազատագրումից հետո լեգեոնականներն իրեն բազմաթիվ խանդավառ նամակներ են ուղարկել, որոնցում գերիշխում էր հետեւյալ հաղթական տրամադրությունն ու զգացողությունը. *«Մենք մոտենում ենք հայկական հողերին, վերջապես ապացուցեցինք, որ «նապաստակ» չենք: Կեցցե՛ Ֆրանսիան, կեցցե՛ Հայաստանը»*[28]:

---

[23] Անդ:

[24] Տես **W. Massey**, նշվ. աշխ., էջ 133:

[25] Տես «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962», խմբագիր՝ Ա.Կիտուր, հ. Ա., Պէյրութ, 1962, էջ 531:

[26] Տես **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 142:

[27] **Բ. Սապահ-Գիւլեան**, Կենսագրութիւն Ստեփան Սապահ-Գիւլեանի, Նիւ Յորք, 1936, էջ 141:

[28] **Շ.-Տ. Թեքեյան**, Մուսա լեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր, Երեւան, 2002,

Լեգեոնականները գերեցին թշնամու 147 զինվոր, 1 մայոր եւ 3 կապիտան, որոնցից մեկը հույն էր[29]: Թուրք մայորը զարմացավ՝ լեգեոնականների թվաքանակը տեսնելով. *«Մեր զօրքը բարոյալքուեցաւ այն օրէն, երբ անգլիական օդանաւերը թռուցիկներ թափեցին մեր վրայ, որոնցմէ ըմբռնեցինք թէ՝ այս անգամ իրենց վրայ յարձակողները ոչ հնդիկներ, ոչ ալ ալճերիացիներ եւ ոչ ալ եւրոպացիներ էին, այլ՝ վրիժառու հայ գունդեր, բայց չէինք կարծեր որ այդքան սակաւաթիւ էք»*[30]: Թուրք մայորը նաեւ ասել է. *«Մինթե դեռ հայ կա աշխարհի վրա: Մաշալլահ, մաշալլահ, ձեր ազգը չի մեռնի ուրեմն»*[31]:

Հայ լեգեոնականները ճակատամարտում տվեցին 23 սպանված եւ 76 վիրավոր: Զոհվածների աճյունները սեպտեմբերի 20-ին թաղվեցին թիվ 26 դիրքում՝ Ռաֆաթի բարձունքի հարավ-արեւմտյան լանջին՝ գյուղից 300 մետր հեռավորության վրա՝ եղբայրական գերեզմանում[32]:

Մեգիդոյի ռազմագործողության արդյունքում թուրքական բանակը ջախջախվեց բոլոր ուղղություններում: 60-րդ դիվիզիան կարողացավ գրավել թուրքական երեք պաշտպանական գծերը եւ 7.30-ին արդեն բաց էր հեծելազորի ճանապարհը դեպի թշնամու թիկունք: Գրավվեցին Թուլկարմը, Միսկեհը, Քաֆր Քասիմը եւ Ջեւիս Թեփեն[33]:

Շուտով հակառակորդը որոշ չափով ուշքի եկավ եւ փորձեց հակագրոհ կազմակերպել: Մի քանի դիրքերից բրիտանացիներն ստիպված էին նահանջել, սակայն ժամը 11-ի մոտ բոլոր ուղղություններում թշնամու հակագրոհները կասեցվեցին, եւ զորքերի առաջխաղացումը շարունակվեց: Թուրքական 8-րդ բանակի կենտրոն Թուլկարմում բրիտանացիների ձեռքն անցան գնացքներ, մեծ քանակությամբ տեխնիկա, զենք, զինամթերք, գերիներ: Մեկ օրում 21-րդ կորպուսի ձեռքն անցավ 7 000 գերի, 100 հրանոթ, 170 գնդացիր եւ հսկայական քանակությամբ այլ ռազմավար[34]:

Բրիտանական հեծելազորն անցավ Մեգիդոյի կիրճը եւ սեպտեմբերի 20-ի գրավեց Աֆուլան, Նազարեթը, Ջենինը, Բեյսանը: Դրանով թուրքական բանակի թիկունքում գտնվող բոլոր երկաթուղային

էջ 61:

[29] Տես **Մ. Աւետեան**, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ: Վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով, Փարիզ, 1954, էջ 477:

[30] «Պատմութիւն Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան 1887-1963», էջ 343:

[31] **Մ. Արզումանյան**, Արհավիրքից վերածնունդ, Երեւան, 1973, էջ 409:

[32] Տես **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 147:

[33] Տես **W. Massey**, նշվ. աշխ., էջ 132-134:

[34] Տես անդ, էջ 138:

եւ ճանապարհային հանգույցները հայտնվեցին բրիտանացիների վերահսկողության տակ: Այդպիսով՝ Պաղեստինյան ռազմաճակատի թուրքական բանակը հայտնվեց շրջապատման մեջ: Փաստորեն, 22 ժամում հեծելազորը առաջացավ 80 կմ: Նրանց մուտքը Նազարեթ անսպասելի էր թշնամու համար: Թուրքական շտաբի բազմաթիվ սպաներ գերվեցին գիշերազգեստներով, իսկ շտաբի փաստաթղթերն անվնաս վիճակում ընկան բրիտանացիների ձեռքը: Թուրքական Պաղեստինյան բանակի հրամանատար Լիման ֆոն Սանդերսը հապճեպ հեռացավ քաղաքից: Սակայն Նազարեթը ամբողջությամբ գրավելու համար ծավալվեցին համառ մարտեր[35]: Սեպտեմբերի 21-ին բրիտանական հեծելազորը հաղթական երթով անցավ Նազարեթով: Փաստորեն, առանց լուրջ դժվարության՝ բրիտանացիներին անցավ Տիբերիայից Հայֆա եւ Աքրա տանող ճանապարհը: Գեներալ Չեթվուդի 20-րդ կորպուսը նույնպես հաջողությամբ կատարեց իր վրա դրված առաջադրանքը եւ լուրջ հարված հասցրեց թշնամուն:

Սեպտեմբերի 19-ի երեկոյան՝ մարտը դադարելուց հետո, Հայկական լեգեոնի Բ. գումարտակն աննկատ տեղափոխվեց թիկունք, իսկ Ա. գումարտակը զբաղեցրեց նրա դիրքերը: Սեպտեմբերի 20-ի առավոտյան ժամը 5-ին 21-րդ կորպուսի զորքերը, որոնց կազմում էր Հայկական լեգեոնը, հարձակումը շարունակելու հրաման ստացան: Սակայն պարզվեց, որ հայկական զորախմբի առաջ գտնվող դիրքերը դատարկ էին, քանի որ գիշերը թշնամին ճողոպրել էր[36]: 54-րդ դիվիզիան յոթժամյա մարտերից հետո գրավեց Ազունը, որտեղ գերմանական Ասիա կորպուսի շտաբն էր տեղակայված[37]: Սեպտեմբերի 21-ին գրավվեցին Սամարիան եւ Նաբլուսը, որը թուրքական 7-րդ բանակի կենտրոնն էր[38]: Նահանջող թուրքական ուժերը ենթարկվեցին հրետանային եւ օդային ջախջախիչ ռմբակոծության: Թուրքական 7-րդ եւ 8-րդ բանակները ամբողջովին ոչնչացվեցին:

Թուրքերի ջախջախման ու հետապնդման գործում որոշակի ներդրում ունեցավ թուրքական բանակի հայազգի կապիտան Սարգիս Թորոսյանը, որն աչքի էր ընկել Դարդանելի ճակատամարտում, պարգեւատրվել անձամբ Էնվերի կողմից, սակայն նրա ծնողները եւ քույրը նույնպես դարձել էին Մեծ եղեռնի զոհ: Նրա երկու եղբայրները, որոնք ԱՄՆ-ում էին պատերազմի նախօրյակին, կամավորագրվել

[35] Տես անդ, էջ 151-152:
[36] Տես **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 123:
[37] Տես **W. Massey**, նշվ. աշխ., էջ 170:
[38] Տես անդ, էջ 173:

էին Հայկական լեգեոնին: Մեգիդոյի ճակատամարտի առաջին օրը Ս. Թորոսյանը նշանակվել էր 7-րդ եւ 8-րդ բանակների համակարգող, սակայն կտրել էր հեռախոսի ու հեռագրի լարերը, նախապես ունեցած պայմանավորվածությամբ միացել արաբ ապստամբներին եւ 1 000 հոգանոց ջոկատով հարվածել թուրքերին թիկունքից, փակել փախուստի ճանապարհները: Մինչեւ Դամասկոս նա հետապնդել է թուրքերին, որի ընթացքում նրա ղեկավարած արաբական զորախմբի թիվը հասել է 6 000-ի[39]:

Սեպտեմբերի 23-ին գրավվեց Աքրան, նույն օրը համառ մարտերից հետո՝ Հայֆան[40]: Սեպտեմբերի 25-ին համառ մարտերից հետո գրավվեց Տիբերիա լճի հարավային ափին գտնվող Սամախ քաղաքը, որտեղով անցնում էր Աֆուլա-Դերա երկաթուղին, ապա՝ Տիբերիա քաղաքը[41]:

Ռազմաճակատի արեւելքում գեներալ Է. Չայթորսի զորքերը սեպտեմբերի 17-ից սկսեցին մեծ ակտիվություն ցուցաբերել իրենց հանձնված գծի արեւելյան եւ հյուսիսային հատվածներում, որպեսզի այդ հատվածից գլխավոր հարձակման թյուր պատկերացում առաջացնեն հակառակորդի մոտ եւ ստիպեն այստեղ կենտրոնացնել ուժերը: Չայթորսի խնդիրն էր պաշտպանել Հորդանանի հովիտը եւ հարձակման գնացող 20-րդ կորպուսի աջ թեւը: Թշնամու նահանջի առաջին նախանշանների դեպքում նա պետք է անմիջապես հարձակման գնար դեպի Էս Սալթ եւ Ամման, ուր օգնության էին գալու նաեւ Մեքքայի շերիֆի արաբական զորքերը: Սեպտեմբերի 19-21-ին թշնամին լուրջ ճնշում էր գործադրում Չայթորսի զորախմբի վրա: Սակայն շուտով թուրքերը տեղեկացան 7-րդ եւ 8-րդ բանակների ջախջախման, արաբների կողմից Դերայի գրավման մասին, որով փակվել էր նրանց նահանջի ճանապարհը: Դա խուճապ առաջացրեց 4-րդ բանակում եւ բարձրացրեց բրիտանական զորքերի մարտական ոգին[42]: Սեպտեմբերի 22-ին Չայթորսի զորքերին հաջողվեց հյուսիսային ուղղության վրա գրավել Դամիեի կամուրջը Հորդանանի վրա, որով ճանապարհը Նաբլուսից ու Բեյսանից գնում էր Էս Սալթ: Հաջորդ օրը վերջնականապես գրավվեց Էս Սալթը, որտեղ տեղակայված էր թուրքական 4-րդ բանակի շտաբը[43]: Բրիտանական ուժերը շարունակեցին հարձակումը եւ սեպտեմբերի 24-ին գրավեցին

[39] Տես **Ս. Թորոսյան**, նշվ. աշխ., էջ 176-181:
[40] Տես **W. Massey**, նշվ. աշխ., էջ 190, 193:
[41] Տես անդ, էջ 198-200:
[42] Տես **H. Gullett**, The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918 (10th edition), Sydney, 1941, էջ 714-717:
[43] Տես **W. Massey**, նշվ. աշխ., էջ 208:

Ամմանի հյուսիսում գտնվող Սուվեյլե եւ արեւմուտքում գտնվող Նիմրին բնակավայրերը: Սեպտեմբերի 25-ի արշալույսին սկսվեց Ամմանի գրոհը: Համառ մարտերից հետո այն վերջապես գրավվեց, եւ բրիտանացիների վերահսկողության տակ անցավ Հեջազի երկաթուղին[44]:

Հարձակման հաջողությանը նպաստեց այն, որ էմիր Ֆեյսալի արաբական բանակը սեպտեմբերի 16-ից մոտեցավ Դերային, որտեղից բաժանվում էր Դամասկոսից դեպի Բեյսան եւ Ամման գնացող երկաթուղին: Սեպտեմբերի 17-ին արաբները գրավեցին Դերայից հյուսիս գտնվող Թել Արար կայարանը, պայթեցրին երկաթուղու մոտ 15 կիլոմետրանոց հատված, փակեցին ճանապարհը: Սեպտեմբերի 23-ին արաբները գրավեցին Դերան[45]: Արդյունքում թուրքական 4-րդ, 7-րդ եւ 8-րդ բանակները չկարողացան երկաթուղով օգնական ուժեր ստանալ Դամասկոսից, իսկ պարտությունից հետո չկարողացան զորքերն ու տեխնիկան տեղափոխել թիկունք:

Հետագա օրերին բրիտանացիները շարունակեցին շրջապատման մեջ մնացած թուրքական բանակի մնացորդների վնասազերծումը: Թուրքական Պաղեստինյան բանակն ամբողջությամբ ոչնչացվեց: Սպանվեցին ու գերվեցին տասնյակ հազարավոր զինվորներ: Միայն 5-6 000 զինվորների հաջողվեց փախուստի դիմել:

Մեգիդոյի ճակատամարտում առաջին անգամ հեծելազորը եւ օդուժը համատեղ, արդյունավետ համագործակցությամբ վարեցին գրեթե ամբողջ հարձակողականը: Օդուժը շարքից հանեց թշնամու կապի միջոցները, մեծ արդյունավետությամբ ոչնչացրեց թշնամու տեխնիկան եւ մարդուժը, հետախուզական անուրանալի ծառայություն մատուցեց հարձակվող բանակին:

1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած Մեգիդոյի հաղթական ճակատամարտի արդյունքում Միջերկրականից մինչեւ Մեռյալ ծով ձգվող թուրքական ամբողջ ճակատը քայքայվեց, իսկ «Յըլդըրըմ» բանակը ցաքուցրիվ եղավ[46]:

Ինչպես տեսանք, Հայկական լեգեոնի հաջողությունը նույնպես նպաստեց դաշնակից ուժերի հաղթանակին: Ֆրանսիան որոշեց օգտվել իր դրոշի ներքո կռվող հայ կամավորների սխրանքից՝ սեփական հեղինակությունը բարձրացնելու նպատակով: «Մարտական խաչ» շքանշանով պարգեւատրվեցին 25 լեգեոնականներ[47]: Արարայում ցու-

[44]Տես անդ, էջ 211:
[45] Տես **F. Cutlack**, The Australian Flying Corps, էջ 162-163:
[46] Տես **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 153:
[47] Տես **Կ. Հարությունյան**, Ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը 1916-1920 թվական-

ցաբերած խիզախության համար շքանշաններ ստացան հայ սպաներ Վահան Փորթուգալյանը, Ջոն Շիշմանյանը, Հարություն Եսայանը, Հակոբ Արեյանը, Հակոբ Գարասեֆերյանը[48]:

Գնդապետ դը Պիեպապը սեպտեմբերի 21-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Պիեր Լեֆեւր-Պոնտալիսին ուղարկած նամակում գրում էր. *«Արեւելյան լեգեոնն ի հայր է բերել ամենամեծ խիզախության վկայություն, պահպանելով իր գրաված դիրքերը, չնայած Արարայից փեղացող սարսափելի կրակին. այն այդտեղ կրել է զգալի կորուստներ»*[49]:

Իր հերթին Լեֆեւր-Պոնտալիսը սեպտեմբերի 26-ին Ֆրանսիայի արտգործնախարար Ստեֆան Պիշոնին ուղարկած նամակում մեծ գովեստով էր խոսում Հայկական լեգեոնի մասին: Նշում էր, որ լեգեոնն իր արդյունավետությամբ գերազանցել է այն ջանքերը, որոնք գործադրվել էին այն կազմակերպելու համար: Դեսպանը հայտնում էր, որ բրիտանացիները մինչեւ ճակատամարտը անվստահությամբ էին վերաբերվում այդ զորամիավորմանը: Դեսպանը գտնում էր, որ չնայած բրիտանացիների համեմատությամբ իրենք երկրորդական դեր ունեն Պաղեստինյան ճակատում, սակայն պետք է մամուլով տեղեկացնել լեգեոնի եւ ֆրանսիական մյուս զորամասերի սխրանքների մասին, քանի որ դա քաղաքական առումով կնպաստի Ֆրանսիայի հեղինակության բարձրացմանը: Նա տեղեկացնում էր, որ Ալենբին իրեն ուղարկած հեռագրով ընդունել էր ֆրանսիական զորքերի ցուցաբերած քաջությունն ու անվեհերությունը[50]:

Սեպտեմբերի 29-ին Եգիպտոսի ֆրանսիական դիվանագիտական գործակալությունը հետեւյալ պաշտոնական հաղորդագրությունը տարածեց. *«Գեներալ Ալլենբիի գերագույն հրամանատարության ներքո դրված ֆրանսիական զորքերը Պաղեստինի հարձակման ժամանակ ցուցաբերել են ցանկացած գովեստից վեր կանգնած մեծ փոկունություն եւ խիզախություն, որոնց գլխավոր հրամանատարը բարեհաճել է մատուցել հարգանքի առանձնահատուկ տուրք:*

Հրաձիգների գունդը գրավելով Երեք մացառուտների եւ Սուրի բլուրի դիրքերը, մեկ ժամից էլ պակաս ժամանակամիջոցում գերեվարել է

ներին, ՊԲՀ, 1999, թ. 2-3, էջ 107:

[48] Տես «Ատանայի Հայոց պատմութիւն», էջ 430:

[49] **Ա. Պեյլերյան**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմանեց Վ. Պողոսյանը, հ. Բ., Երեւան, 2005, էջ 374:

[50] Տես անդ, էջ 374-375:

13 թուրք սպաների, այդ թվում՝ մեկ հրամանատարի, 200 գերու եւ գրավել է մեծ քանակությամբ գնդացիրներ:

Մյուս կողմից, Արեւելյան լեգեոնն ի հայտ է բերել ամենամեծ խիզախություն՝ պահպանելով իր դիրքերը, չնայած Արարատում տեղակայված թուրքական մարտկոցներից տեղացող ահարկու կրակին: Սիրիական վաշտն ի հայտ է բերել մեծ արժանիքներ՝ դիմանալով Ռաֆայում մահ ափոող ռմբակոծությանը:

Եգիպտոսում Ֆրանսիայի դիվանագիտական գործակալությունը հպարտ է, քանի որ կարող է հիացմունքի փուրք մատուցել հայերին ու սիրիացիներին, որոնք ֆրանսիական բանակի շարքերում հենց նոր դրսեւորել են իրենց հայրենասիրությունն ու ռազմական անվեհերությունը»[51]:

Պաղեստինում Ֆրանսիայի գերագույն կոմիսարի ժամանակավոր պաշտոնակատար Կուլոնդրի եւ իր անունից Լեֆեւր-Պոնտալիսը սեպտեմբերի 26-ին շնորհավորական ուղերձ էր ուղարկել նաեւ Եգիպտոսի հայ ազգային միության նախագահ Լեւոն Մկրտիչյանին, որտեղ գովաբանում էր Հայկական լեգեոնի սխրանքը: Հոկտեմբերի 1-ին ուղարկած պատասխանում Լ. Մկրտիչյանը հայտնում էր, որ հայերը հպարտ եւ ուրախ են լեգեոնի ձեռքբերումների համար: Նշում էր, որ հաջողության համար պարտական են առաջին հերթին գնդապետ Լուի Ռոմիոյի ջանքերին, որը զորամասը հեռու պահեց կուսակցությունների միջամտություններից եւ դարձրեց կուռ կառույց: Նա շնորհակալություն էր հայտնում Ֆրանսիային, որ կազմավորեց ու մարզեց այդ զորամասը: Լ. Մկրտիչյանը նաեւ ակնարկեց, որ Արեւելյան լեգեոնը հիմնականում հայերից է կազմված եւ միայն բռնություններից խուսափելու համար է, որ ժամանակին չեն կոչել Հայկական լեգեոն[52]:

Հոկտեմբերի 4-ին «Թայմսը» հրատարակեց լորդ Ռոբերտ Սեսիլի հետեւյալ խոսքերը. *«Հայկական զորքերը, ծառայելով բրիտանական, ֆրանսիական բանակներում, ինչպես նաեւ ամերիկյան բանակում, իրենց պատվավոր բաժինն ունեն գեներալ Ալենբիի մեծ հաղթանակում Պաղեստինում Հայաստանի վերաբերյալ դաշնակիցների քաղաքականությունը չի փոխվել»*[53]:

Հոկտեմբերի 9-10-ին ֆրանսիական մամուլը հրատարակեց հետեւյալ հաղորդագրությունը. *«Ֆրանսիական հրամանատարության տակ*

[51] Անդ, էջ 375:
[52] Տես անդ, էջ 376-377:
[53] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 19-20:

կովող զորքերի մեջ է Հայկական լեգեոնը, որը ակտիվորեն մասնակցում է Սիրիայի ազատագրմանը: Այդ զորամասը միացված է ֆրանսիականին եւ կովում է ֆրանսիացի սպաների հրամանատարության տակ: Այս վերջին շաբաթների բոլոր գործողություններում հայկական զորքերը ցույց տվեցին իրենց զինվորական լավագույն հատկությունները եւ ամենամեծ արժանիքը: Սիրիայում դաշնակցային զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ալենբին հաստատեց այդ արժանիքը Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին ուղարկած հեռագրով. «Հպարտ եմ, որ Ձեր հայրենակիցները ակտիվ դեր խաղացին կովում եւ մասնակցեցին մեր մեծ հաղթանակին»: Իր կողմից ֆրանսիական զորքերի հրամանատարը, որի հրամանատարության տակ կովում են նրանք, լույս սփռեց այդ քաջարի զորքերի արժանիքների, փոկունության եւ եռանդի վրա, որոնց հավատարմությունը դաշնակիցներին անխախտ է մնացել եւ պատիվ է բերում ֆրանսիական դրոշին, որի տակ են գտնվում նրանք»[54]:

Արեւելքում դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար Ալենբին նույնպես բարձր գնահատեց հայ կամավորների սխրանքը: Հոկտեմբերի 12-ին Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային ուղարկած հեռագրում նա նշում էր. *«Հպարտ եմ, որ իմ հրամանատարության տակ ունեմ հայկական գունդ: Հայերը փայլուն կերպով կովեցին եւ մեծ մասնակցություն ունեցան իմ հաղթանակում»*[55]: Իսկ Եգիպտոսի հայ ազգային միության ուղարկած շնորհավորանքներին Է. Ալենբին պատասխանեց. *«Ջերմապէս շնորհակալ եմ ձեր շնորհաւորութիւններուն համար, եւ հպարտ եմ այն իրողութեամբ, որ Արեւելեան Լեգէոնի ձեր հայրենակիցները գործօն բաժին մը վերցուցին կռուին մէջ, եւ մասնակից եղան մեր յաղթանակին»*[56]:

Այսպիսով՝ Ֆրանսիայի դրոշի ներքո կովող Հայկական լեգեոնը որոշակի ներդրում է ունեցել Պաղեստինի թուրքական ռազմաճակատի ջախջախման գործում, որը բարձր է գնահատվել գլխավոր հրամանատար Ալենբիի, ինչպես նաեւ ֆրանսիական ղեկավարության կողմից: Հայ մարտիկների քաջությունն ու բարձր մարտունակությունը Ֆրանսիան փորձել է օգտագործել սեփական հեղինակությունը բարձրացնելու նպատակով: Թուրքերի ջախջախման գործում ներդրում է ունեցել նաեւ Ս. Թորոսյանը, որի ղեկավարած արաբական զորամասը փակել է թուրքերի նահանջի ուղին, ապա հետապնդել է մինչեւ Դամասկոս եւ

[54] Անդ, թ. 23: «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան», էջ 532:
[55] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 25: Նաեւ՝ ֆ. 430, ց. 1, գ. 1320, թ. 11:
[56] **Մ. Տամատեան**, Իմ յուշերէս, Պէյրութ, 1985, էջ 123:

առաջիններից մեկն է մտել քաղաք: Ինչպես տեսնում ենք, հայկական զինուժն իր դերակատարությունն ունեցավ ցեղասպան պետության ջախջախման գործում, որով հայ կամավորները որոշ չափով լուծեցին մորթված մեկ ու կես միլիոն անմեղ ազգակիցների վրեժը:

РЕЗЮМЕ

Армянский легион, который воевал под французским флагом имел участие в разгроме палестинского турецкого фронта. Он отличился в битве при Мегиддо. Капитан турецкой армии Саркис Торосян присоединившиеся арабским повстанцам, возглавил арабский полк и закрыл путь отступления турецкой армии. Он преследовал их до Дамаска. Таким образом, армянские силы играли определенную роль в разгроме турок, и так в какой-то степени армянские добровольцы отомстили за полтора миллиона невинных соотечественников убитых во время Геноцида Армян.

SUMMARY

The Armenian Legion fighting under French flag had part in crushing of the Palestinian turkish front. He distinguished himself at the Battle of Megiddo. Captain of turkish army Sargis Torosian, who had joined the Arab rebels, leding Arab army blocked the Turkish retreat path, then chased up to Damascus. Thus, the armenian forces play some role in crushing of turks, and so in some extent armenian volunteers took revenge for one and a half million innocent compatriots murdered during the Armenian Genocide.